ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«01» 06 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

## ԲՓ 52

***Ձեռնարկողը՝*** ***<<ԳԱՋ>> ՓԲԸ***
*Ք. Երևան, Ջրվեժի խճ.1*

***Գործունեությունը՝*** ***Գաջի գործարանի վերազինման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
*ք. Երևան*

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 7թերթ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

**թիվ ԲՓ 52**

**<< 01 >> 06 2018թ.**

## *<<Գաջի գործարանի վերազինման>> նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն*

Պատվիրատու՝ << Գաջ>> ՓԲԸ

Նախագծող՝ <<Ակունք-Ֆիրմա>> ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Աշխատանքային նախագիծ.

- շրջակա միջավայրի վրա ազդեցության (ՇՄԱԳ) հաշվետվություն,
- նախագծային փաստաթղթեր:

Տեղադրման վայրը՝ ք. Երևան

Նախատեսվող գործունեությունը գտնվում է Երևան քաղաքի Նոր-Նորք համայնքում՝ Ջրվեժի խճուղի-1 հասցեում, Նորքի 9-րդ զանգվածից մոտավորապես 650.0մ հեռավորության վրա:

Նախագծով նախատեսվում է գաջի գործարանի վերազինում՝ ցեմենտի արտադրության ավելացում: Վերազինումն իրականացվում է «Գաջ» ՓԲ ընկերության գործող տարածքում և լրացուցիչ հողատարածքներ չեն խախտվելու: Գործարանի վերազինման նախագծով գաջի արտադրության համար նախատեսված արտադրամասերը, ինչպես նաև երեք վառարաններն, օգտագործվելու են ցեմենտի արտադրության համար: Գործարանը աշխատում է տարեկան 350 օր, օրական երկու հերթափոխով, յուրաքանչյուր հերթափոխը 12 ժամ:

Տարեկան արտադրողականություններն ըստ գաջի և ցեմենտի նախատեսվում է.

| Անվանումը | Տարեկան արտադրողականությունը, տ | Օրական ծախսը, տ | Հերթափոխային, տ |
|---|---|---|---|
| Գաջ | 250 000 | 714,3 | 357,2 |
| Ցեմենտ | 148 000 | 422,9 | 211,4 |

«Գաջ» ՓԲ ընկերության գործարանի ներկայիս արտադրողականությունը նախատեսված է մինչև 500.0հազ.տ/տարի գաջ: Ելնելով շուկայի պահանջարկի ավելացման պահանջարկից, որը պայմանավորված է շենքերի և շինությունների շինարարության, ճանապարհաշինության աճով, մեծացել է ցեմենտի պահանջարկը: Հաշվի առնելով այս հանգամանքը «Գաջ» ՓԲ ընկերությունը նախատեսում է վերազինել գործարանը և գաջի արտադրության հետ զուգահեռ արտադրել նաև ցեմենտ:

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ գաջի արտադրության համար հումք է հանդիսանում կավագիպսը, որը կուտակվում է 0,29հա մակերեսով բաց պահեստում: Կավագիպսը ենթարկվում է երկփուլանի ջարդման: Առաջին փուլում ջարդումն իրականացվում է СМД-585 մակնիշի այտավոր ջարդիչում:

Այտավոր ջարդիչի արտադրամասից կավագիպսը փակ փոխակրիչով տեղափոխվում է երկրորդային ջարդման արտադրամաս: Երկրորդային ջարդումն իրականացվում է СМД-975 մակնիշի մեկ մրճավոր ջարդիչի միջոցով, կավագիպսը մանրեցվում է մինչև 20 մմ:

Մանրեցված կավագիպսը մուրճավոր ջարդիչի արտադրամասից փակ փոխակրիչով տեղափոխվում է երեք 100.0տ-ոց հումքային բունկերներ:

Բունկերներից հումքը փոխակրիչով բարձվում է վառարաններ: Հումքը չորացվում է միաժամանակ երկու վառարաններում 1100°C ջերմաստիճանում: Վառարանից դուրս եկող ծխագազերը ենթարկվում են երկաստիճան փոշեմաքրման: Փոշեմաքրման գումարային արդյունավետությունը կազմում է 80%: Յուրաքանչյուր վառարանից ծխագազերը մթնոլորտ են արտանետվում 27.0մ բարձրությամբ և 0,85մ տրամագծով խողովակներից:

Վառարաններից հումքը փոխակրիչներով տեղափոխվում է միաժամանակ աշխատող 5 գնդավոր աղացներ: Աղացումն իրականացվում է չոր եղանակով:

Պատրաստի գաջը փակ փոխակրիչով աղացման արտադրամասից տեղափոխվում է օդաճնշապոմպի բունկերներ, որտեղից պնևմոտրանսպորտի միջոցով գաջը մտնում է 6 սիլոսներ:

Աղացման արտադրամասից արտանետումները կազմակերպված են, փոշու արտանետումները անցնում են երկաստիճան փոշեմաքրում: Մաքրումն իրականացվում է հաջորդաբար՝ գումարային փոշեմաքրման աստիճանը կազմում է 75%: Մթնոլորտ արտանետումները արտադրամասից իրականցվում են 0,5մ տրամագծով չորս խողովակների օգնությամբ, որոնց բարձրությունը կազմում է 13.0մ:

Օդաճնշապոմպի աշխատանքն ապահովում են 4 կոմպրեսորները, որոնց հովացման համար գործում է ջրի շրջանառու համակարգ:

Սիլոսներից փոշու արտանետումները մթնոլորտ կազմակերպված են, փոշենստեցումն իրականացվում է ճկափողային ֆիլտրերի միջոցով, որոնց մաքրման աստիճանը կազմում է 80%: Սիլոսների բարձրությունը կազմում է 22.0մ, արտանետման խողովակի տրամագիծը՝ 0,5մ:

Վերազինման նախագծով նախատեսվում է ստեղծել արտադրության երկու հոսքագիծ՝ գաջի և ցեմենտի:

Գաջի արտադրության համար նախատեսվող հոսքագիծ վերազինման արդյունքում նախատեսվում է.

- գաջի արտադրությունը նվազացնել՝ հասցնելով այն 250.0հազ.տ/տարի,
- արդիականացնել և ավելացնել փոշեմաքրման սարքավորումները,
- ներդնել սապիրացիոն համակարգեր,
- այտավոր ջարդիչի տեղամասում փոշեմաքրման արդյունավետության բարձրացման համար լրացուցիչ տեղադրել ЦН-15 մակնիշի մարտկոցային ցիկլոններ, որոնց մաքրման աստիճանը կազմում է 80%,
- մրճավոր ջարդիչի տեղամասում տեղադրվելու է լրացուցիչ СМД-975 մակնիշի ջարդիչ, ЦН-15 մակնիշի ցիկլոններ, որոնց մաքրման աստիճանը կազմում է 80%,
- նույնատիպ ցիկլոններ նախատեսվում են նաև հումքային բունկերների տեղամասում,
- վառարանների տեղամասի երկփուլային փոշեմաքրման համակարգը արդիականացվելու է՝ հասցնելով գումարային արդյունավետությունը մինչև 94%,

- աղացման արտադրամասում մաքրման սարքավորումների արդյունավետությունը արդիականացվելու է՝ փոշեմաքրման արդյունավետությունը հասցնելով մինչև 98%:

Համաձայն ցեմենտի արտադրության համար նախատեսվող հոսքագծի նկարագրի կլինկերը նախ բարձվում է մրճավոր ջարդիչ և մանրեցվում: Այնուհետև մրճավոր ջարդիչի արտադրամասից՝ կլինկերը, փակ փոխակրիչով տեղափոխվում է գոյություն ունեցող հումքային 100.0տ-ոց (երեք հատ) բունկերներ: Հումքային բունկերները բարձվելու են ցեմենտի բաղադրիչներով, որոնք խառնվում են հետևյալ հարաբերությամբ՝ 96% կլինկեր և 4% կավագիպս: Ցեմենտի բաղադրիչների տարեկան ծախսը կազմելու է.

| Անվանումը | Տարեկան ծախսը, տ | Օրական ծախսը, տ | Հերթափոխային, տ |
|---|---|---|---|
| Կլինկեր | 142080 | 406 | 203 |
| Կավագիպս | 5920 | 17 | 8.5 |

Տվյալ բաժանմունքում կիրառվելու է ասպիրացիոն համակարգ և փոշեմաքրում մարտկոցային ԼԻ-15 ցիկլոններում: Ցիկլոններից հետո փոշուց մաքրված օդը, 0,315մ տրամագծով և 17.0մ բարձրությամբ խողովակով, արտանետվելու է մթնոլորտ:

Բունկերներից հումքը փոխակրիչով տեղափոխվելու է թրծման երկու գործող, վառարաններ որտեղ թրծումն իրականացվելու է 1350°C աստիճանում: Փոխակրիչների մակերեսից փոշու կլանումը իրականացվելու է ասպիրացիոն համակարգով: Վառարաններից դուրս եկող ծխագազերը ենթարկվելու են երկաստիճան փոշեմաքրման, որոնց գումարային արդյունավետությունը յուրաքանչյուր վառարանի համար կազմելու է 94%: Յուրաքանչյուր վառարանից դուրս եկող ծխագազերը մթնոլորտ են արտանետվելու 27.0մ բարձրությամբ և 0,85մ տրամագծով խողովակներով:

Թրծված կլինկերի և կավագիպսի խառնուրդը տրվելու է աղացման: Պատրաստի ցեմենտը՝ փակ շնեկով, աղացման արտադրամասից տեղափոխվելու է օդաճնշապոմպի բունկերներ, որտեղից էլ մղվելու է 6 սիլոսներ:

Աղացման արտադրամասից փոշու արտանետումները մինչ մթնոլորտ արտանետվելը ենթարկվելու են երկաստիճան մաքրման՝ գումարային 98% արդյունավետությամբ, որից հետո միայն կարտանետվեն մթնոլորտ՝ 0,5մ տրամագծով և 13.0մ բարձրության, չորս խողովակների միջոցով:

Սիլոսներից մթնոլորտ փոշու արտանետումները կատարվելու են ճկափողային՝ 80% արդյունավետություն ապահովող, զտիչներով փոշենստեցում իրականացվելուց հետո: Սիլոսների բարձրությունը 22.0մ է, իսկ արտանետման խողովակի տրամագիծը՝ 0,5մ:

«Գաջ» ՓԲԸ-ի գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- տեղադրել ասպիրացիոն համակարգեր՝ արտանետումները դարձնելով կազմակերպված;
- նվազեցնել անկազմակերպ արտանետումները;
- բարձրացնել փոշեմաքրման արդյունավետությունը;
- նյութի տեղափոխումն իրականացնել փակ փոխակրիչներով և շնեկով;
- սիլոսները կահավորել ճկափողային զտիչներով;
- որսված փոշիները վերադարձնել տեխնոլոգիական գործընթաց;
- կոմպրեսորների հովացման համար գործում է ջրի շրջանառու համակարգ;
- բարեկարգել և կանաչապատել գործարանի տարածքը:

Գործունեության իրականացման աշխատանքների ընթացքում կառաջանան մի շարք արտադրական և կենցաղային բնույթի թափոններ, որոնց համառոտ բնութագիրը ներկայացվում է աղյուսակում:

| N | Անվանումը | Վտանգա-վորության դասը | Ծածկագիրը | Չափման միավորը | Քանակը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բանեցված կոմպրեսորային յուղեր | III | 54100211 02 03 3 | լիտր | 1500 |
| 2 | Բանեցված դողածածկաններ | IV | 57500202 13 00 4 | տոննա | 2.8 |
| 3 | Կազմակերպության կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) | IV | 91200400 01 00 4 | տոննա | 7 |
| 4 | Բանեցված դիզելային յուղեր | III | 54100203 02 03 3 | լիտր | 200 |
| 5 | Հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր | III | 54100207 02 03 3 | լիտր | 500 |
| 6 | Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/ կամ պողպատի փոշի): | IV | 35131100 01 00 4 | տոննա | 10 |

Համաձայն փաստաթղթերի՝ Նոր-Նորք համայնքի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները (մգ/մ$^3$) վերցված են ՀՀ Բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնի կայքէջից: Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի՝ Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների, արդյունքների մասին 2017թ. տեղեկագրի տարեկան միջին պարունակությունները փոշու, ծծմբային անհիդրիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի համար կազմել են.

| Որոշվող միացություն | Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ$^3$ | ՍԹԿ, մգ/մ$^3$ |
|---|---|---|
| Ընդհանուր փոշի | 0.143 | 0.5 |
| Ծծմբային անհիդրիդ | 0.029 | 0.5 |
| Ազոտի օքսիդներ | 0.022 | 0.2 |

<<Գաջ>> ՓԲԸ-ում գաջի և ցեմենտի արտադրության հետևանքով մթնոլորտ է արտանետվելու՝ կավագիպսի, գաջի, ցեմենտի և անօրգանական փոշի, հիմնականում 2÷4 վտանգավորության դասի ընդհանուր 7.94գ/վրկ, 198,1տ/տարի վնասակար նյութեր, ընդ որում՝ ըստ գաջի՝ 84,25 տ/տարի և ըստ ցեմենտի՝ 113,85 տ/տարի:

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, <<Ռադուգա>> ծրագրով: Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքում հաստատված է, որ սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են արդիրապարակում և բնակելի գոտիների համար սահմանված նորմերում: Ուստի մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի բերված ցուցանիշները կարող են հիմք հանդիսանալ գործարանի սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) հաստատման համար: Աղտոտվածության մակարդակները

մոտակա բնակելի գոտում (640.0մ հեռավորության վրա Նորքի 9-րդ զանգվածից) կազմում են՝ 0.004÷0.153 ՍԹԿ միավոր:

Գործարանի ջրամատակարարումը հիմնականում իրականացվում է խմելու որակի ջրով՝ Երևան քաղաքի խմելու ջրամատակարարման ցանցից: Գործարանի կանաչ տարածքի և բաց հրապարակների ոռոգման և ջրցանման համար օգտագործվում է նաև տեխնիկական ջուր քաղաքային ոռոգման ցանցից:

Խմելու որակի թարմ ջուրը օգտագործվում է աշխատողների տնտեսա-կենցաղային կարիքների համար, ինչպես նաև կոմպրեսորների հովացման շրջանառու համակարգի լրասնուցման նպատակով: Այլ արտադրական կարիքների համար ջրի օգտագործում նախատեսված չէ:

Կոմպրեսորների հովացումը կատարվում է շրջանառու ջրով: Շրջանառու հովացման համակարգը օժտված է փակ ջրավազանով: Հովացման ջրերի ջերմաստիճանը կոմպրեսորների ելքում հասնում է 50-55°C-ի, իսկ մուտք գործող ջրի ջերմաստիճանը՝25°C: Գործարանում տեղադրված է 2 կոմպրեսորն աշխատում են միաժամանակ օրական 24 ժամ, տարեկան 350 օր: Փակ շրջանառու համակարգից ջրի կորուստը չնչին է՝ 0.005%, իսկ համակարգի լրասնուցման համար խմելու որակի թարմ ջրի պահանջը՝ 2.4մ³/տարի: Այսպիսով շրջանառու ջրի հաշվարկային ծախսերը տարեկան կազմելու են 48.4հազ.մ³/տարի, օրական՝ 138.2մ³/օր, իսկ ժամային՝ 5.76մ³/ժամ: Խմելու ջրի հաշվարկային ծախսերը կազմում են՝ տարեկան - 970.0մ³/տարի, առավելագույն օրական - 2.907մ³/օր, իսկ ոռոգման ցանցից ջրի օգտագործման ծախսը համապատասխանաբար 342.0մ³/տարի և 1.9մ³/օր:

Շրջանառու ջրով աշխատող կոմպրեսորների հովացման համակարգից հոսքաջրեր չեն առաջանում: Ոռոգման և ջրցանման նպատակներերով ծախսվող ջուրը ամբողջությամբ օգտագործվում է անվերադարձ, արտահոսքեր չեն առաջանում: Առաջացած տնտեսա-կենցաղային կեղտաջրերը ուղղվում են քաղաքային կոյուղու կոլեկտոր: Տարեկան ծախսվող 970.0մ³/տարի թարմ ջրի օգտագործման ընթացքում տնտեսա-կենցաղային կեղտաջրերի հաշվարկային ծախսերը տարեկան կազմելու է 873.0մ³/տարի, օրական՝ 2.49մ³/օր:

Օրվա ընթացքում Երևանի աերացիայի կայան ուղղվում են 1.94կգ աղտոտող նյութեր, իսկ տարեկան՝ 0.38տ: Որևէ արտահոսք բաց ջրային օբյեկտներ բացառվում է:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է Նորքի 9-րդ զանգվածի համար, որը գտնվում է ընկերությունից ուղիղ գծով 650.0մ հեռավորության վրա, ելնելով արտադրության տեխնոլոգիական գործընթացներից, սարքավորումների տեղակայումից և ուղղվածությունից:

Աղմուկի բնույթը հաստատուն է: Հաշվարկները կատարված են վատագույն դեպքի համար՝ հաշվի առնելով ամբողջ տեխնիկայի միաժամանակյա աշխատելու հանգամանքը: 9-րդ զանգվածում՝ նշված հեռավորության վրա, աղմուկի մակարդակը կկազմի՝ 36 դԲԱ, ինչը գտնվում է նորմերի սահմաններում (նորման գիշերը՝ 45 դԲԱ, ցերեկը՝ 55 դԲԱ):

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերը, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, իրականացված հանրային քննարկումների արձանագրությունների արդյունքները, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա լրաշակված նախագծային փաստաթղթերը, կարելի է անել հետևյալ եզրահանգումներ.

Ըստ փաստաթղթերի՝ գործունեություն նախատեսում է իրականացնել «Գաջ» ՓԲ ընկերության պատկանող (գործող գործարանի) տարածքում, Երևան քաղաքի Նորքի 9-րդ զանգվածի բնակելի տներից 640.0մ հեռավորության վրա, բացառելով նոր հողատեսքերի

օտարում և կանաչ տարածքների ներգրավում: Գաջի արտադրության համար անհրաժեշտ հումքը ձեռք է բերվում ընկերության կողմից շահագործվող հանքավայրից, իսկ ցեմենտի արտադրության համար պահանջվող՝ կլինկերը, նախատեսվում է գնել: Գործունեությունը բուսական և կենդանական աշխարհի վրա անմիջական ազդեցություն չի ունենա, քանի որ տարածքը արդեն կառուցապատված է և շահագործվում է տարիներ շարունակ:

Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքում հաստատված է, որ սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են արդիրապարակում և բնակելի գոտիների համար սահմանված նորմերում: Ուստի մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի բերված ցուցանիշները կարող են հիմք հանդիսանալ գործարանի սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) հաստատման համար:

Ընկերությունը իր գործունեության վերազինման արդյունքում ակնկալվում է.

- գործարանի ընդհանուր արտադրողականությունը նվազեցնել տարեկան 102.0հազ.տ-ով, ընդ որում՝ կրճատել գաջի արտադրողականությունը տարեկան 250.0հազ.տ-ով, փոխարենը տարեկան նախատեսվում է արտադրել 148.0հազ.տ ցեմենտ;
- ներկայիս 6 կետերում տեղադրված փոշեմաքրման սարքավորումներից բացի, նախատեսվում է վերազինումից հետո տեղադրել փոշեմաքրման սարքավորումներ ևս 5 կետերում;
- փոշեկլանման համակարգերի ներկայիս արդյունավետությունը 60-80% է, իսկ վերազինումից հետո նախատեսվում է հիմնականում երկաստիճան փոշեմաքրում՝ հասցնելով արդյունավետությունը 80-98%;
- վնասակար արտանետումները մինչև վերազինումը կազմում են 226,01տ/տարի, իսկ վերազինումից հետո՝ 198,1տ/տարի;
- աղտոտվածության մակարդակն վերազինումից հետո էլ արտիրապարակում և բնակելի գոտում գտնվելու է թույլատրելի նորմերի սահմաններում:

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության (գոյություն ունեցող գործարանի տարածք) իրականացման համար նախատեսված տարածքը, չափերը և գործունեության հզորությունը, շահագործման ժամանակ նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադիչներով, կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում: Նախագծում լուծված են կեղտաջրերի հեռացման, աղբահեռացման, վտանգավոր թափոնների կառավարման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Նշեմ նաև, որ համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի հոդված 20-ի 7-րդ կետի՝ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

## Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները (մասնավորապես՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության և այլն):
2. Շահագործման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախագծային փաստաթղթի ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով

պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

3. Գործունեության ընթացքում իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգ, իսկ հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվությունը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հասարակայնության համար:

4. Շահագործման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած շինաղբի (կենցաղային աղբ) տարածքից հեռացումը, ինչպես նաև ջրօգտագործումը և վտանգավոր թափոնների (պահեստավորում և տարածքից հեռացում) կառավարումը անհրաժեշտ է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Գաջ>> ՓԲԸ կողմից ներկայացված <<Գաջի գործարանի վերազինման>> նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Կ. Մովսիսյան